Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի - 2024 թ.

11-րդ դասարան

Տևողությունը՝ 180 րոպե

Կապուտաչյա լճակը չգիտես որ ժամանակներից երկրի վրա հայտնված ասես լաջվարդ ***երկնքից*** պոկված մի կտոր լինի նա մեղմ զեփյուռի ***զգվանքից*** հուզված մանրակոհակ ելևէջներով նազում է ապշեցնելով չնաշխարհիկ իր ***գեղեցկությամբ:*** Ափամերձ տները երկհարկանի կամ եռահարկ իրենց դողդոջուն ստվերներն են զցել մաքրափայլ ալիքների մեջ ու նրա ***աչք շոյող*** հայելանման հայացքը անդրադարձնում է շրջակա ամեն ինչ սաղարթախիտ ծառերը ծաղկազարդ ճեմուղիները ձյունաճերմակ շուշաններով եզերված և զովասուն տաղավարները գրկաբաց ընդունելով ***ամենքին*** փորձ են անում ***մեղմելու*** ամռան մինչև քառասուն աստիճան հասնող տապը: Թվում է այս ամենն անձեռակերտ կտավ է անտես ***նկարչի կողմից*** ստեղծված:

Լճակի արևելյան ափի դիմաց արձանացած լեռան փեշին ***փռված*** է հինավուրց մի ավան ***ուր*** ժամանակն անցնում է խաղաղ կարգով և ավանի կյանքը կախարդական ժամացույցի պես մի անգամ լարված հարատևում է մաթեմատիկական ճշգրտությամբ: ***Ոչինչ*** չի խախտում նրա անդորր առօրյան լճակը վետվետում է մեղմ ծառուղին նիրհում թուփ ու սաղարթի սոսափով արբած ու տների տանիքներին լուռ փշրվում են արեգակի ոսկեդեղձան շողերը:

Ինչ գողտրիկ հիանալի անկյուն:

1. Կետադրի՛ր համր բնագիրը: (3 միավոր)

2. Նշի՛ր տեքստում թավ և շեղ գրված բառերի շարահյուսական պաշտոնները: (3 միավոր)

3. Առանձնացրո՛ւ սխալ գրված բառաձևերը. նշի՛ր ճիշտը. մի՛ կպիր, համաձայն ասածին, ամսեկան, այլոց, նրանք ինքները, մի՛ փախչիր, մոտեցրի, ամենից շքեղագույն, սառավ, հոգնացրեց, լվացի՛ր, ըստ օրենքով, կթռնեն, առանց թույլտվություն: (2 միավոր)

4. Գրի՛ր 4 պարզ նախադասություն տրական հոլովի տարաբնույթ կիրառություններով՝ յուրաքանչյուրի կողքին նշելով շարահյուսական պաշտոնը: (2 միավոր)

5. Անհրաժեշտ տեղերում գրի՛ր մեծատառով. լատինական այբուբեն, տիկնանց տիկին, հայրենական մեծ պատերազմ, արաբական պետությունների լիգա, ղուկաս առաքյալ, թաիլանդի թագավորություն, կիլիկիայի թագավորություն, արևելքի մարգարիտ, հեռավոր արևելք, բերմուդյան եռանկյունի, առաջին աշխարհամարտ, երկաթի դար, մայր թերեզա, հին հունաստան, կատարի պետություն, մշո սուրբ առաքելոց վանք, չինական պարիսպ, սլավոնական լեզուներ, սուրբ սարգիս, գերմանիայի դաշնային հանրապետություն: (2 միավոր)

6. Կազմի՛ր 4 պարզ նախադասություն *մթագնել* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)

7. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ. բասրանք, նշավակել, փերեզակ, նանրախոս, փերթ, հագագ, խոչ, տիվանդորր, ազոխ, դրասանգ: (1 միավոր)

8. Գրի՛ր շարադրություն «Իմ տունն իմ անառիկ ամրոցն է» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)